— Հարստութիւններ շատ կան մեր երկրում, պարոն բժշկապետ, — ասաց սրբազանը ցաւակցական եղանակով, — մեր հանքերը լի են արծաթով, զառիկով, պղինձով, մենք ունենք նաւթի աղբիւրներ, առատ քարածուխ եւս գտնւում է մեր լեռներում, ուրիշ ինչե՞ր չունենք մենք, բայց օգուտ քաղողներ չկան: Եթէ ձեզ նման ճանապարհորդներ յաճախ այցելէին մեր կողմերում եւ ուսումնասիրէին երկիրը, մենք բախտաւոր կը լինէինք:

— Այդ իրաւ է, — ասաց Ասլանը եւ, նայելով ժամացոյցին, աւելացրեց, — ներեցէք, սրբազան հայր, ես բաւական ժամանակ խլեցի ձեզանից: Ճանապարհորդները առհասարակ սաստիկ շատախօս են լինում, բայց ես չափը անցայ: Ձեր հաղորդած տեղեկութիւնները այն աստիճան թանկագին էին ինձ համար եւ գրաւիչ, որ ես չէի կարող օգուտ չքաղել:

— Շատ ուրախ եմ, պարոն բժշկապետ, — ասաց սրբազանը մի առանձին բարեսրտութեամբ, — դուք ինձ մեծ բաւականութիւն կը պատճառէիք, եթէ, որքան ժամանակ այստեղ կը մնայիք, շուտ-շուտ տեսնոէինք, գուցէ՛ ես կարող կը լինէի ուրիշ ծառայութիւններով եւս պիտանի լինել ձեզ:

— Շատ շնորհակալ եմ, սրբազան հայր:

Այդ միջոցին սրբազանը վեր կացաւ, մտաւ կից սենեակը եւ մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ, ձեռքում բերելով մի օտարոտի բան, որը առաջարկեց Ասլանին, ասելով.

— Դուք ինձ շատ յարգած կը լինէիք, եթէ յիշատակի համար այդ չնչին նուէրը ընդունէիք ինձանից եւ դասէիք ձեր հաւաքած հնութիւնների կարգում:

Դա փոքրիկ թիակի ձեւով մի գործիք էր փղոսկրից շինուած: Նրա կոթը զարդարուած էր ամենանուրբ քանդակներով, իսկ գլուխը կնոջ քնքոյշ ձեռքի նմանութիւն ունէր, որի ափի մէջ երեւում էին խարտոցի ատամների պէս փափուկ խազեր: Ասլանը ձեռքում բռնած երկար նայում էր նրա վրայ, յետոյ, երեխայի պէս ուրախանալով, ասաց.

— Ես այն աստիճան սիրահարուած եմ հնութիւնների վրայ, սրբազան հայր, որ եթէ դուք չտայիք այդ գեղեցիկ ընծան, ես պատրաստ կը լինէի մինչեւ անգամ գողանալ ձեզանից:

— Իսկ ես ձեր այդ փոքրիկ մեղքը կը ներէի, որպէս հոգեւորական, — պատասխանեց սրբազանը նոյնպէս ուրախանալով:

Ուղիղն ասած, ես էլ չկարողացայ զսպել ինձ, սկսեցի ծիծաղել այդ հանաքների վրայ: